ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ՎԱՀԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան

Ի պատասխան Ձեր 13.07.2020թ. հ.20/69191 գրության՝ հայտնում եմ.

Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության և Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված տեղեկատվությունների՝ Նոր Նորքի 2-րդ զանգվածում /շատրվանների հարևանությամբ/՝ Վ. Թոթովենցի 2/1 հասցեում գտնվող <<Վերածնունդ>> այգու տարածքը Երևանի քաղաքապետի 12.07.2006թ. հ.948-Ա որոշմամբ /4,4 հա մակերեսով հողամաս, որից 0.36 հա մակերեսը՝ կառուցապատման նպատակով/ տրամադրվել է Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ եկեղեցի կառուցելու նպատակով, հետևաբար այն գտնվում է Հայ առաքելական եկեղեցու հաշվեկշռում: Այդ իսկ պատճառով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչությունը դեռևս 12.11.2019թ. հ. 17/110990 գրությամբ դիմել էր Հայ առաքելական եկեղեցուն՝ համագործակցելու <<Վերածնունդ>> այգու վերականգնման և բարեկարգման համալիր գործողություններ իրականացնելու համար: Այդ նպատակով հանդիպում է տեղի ունեցել Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցչի հետ, սակայն մինչ օրս շինարարություն չի իրականացվել:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նախաձեռնությամբ պարբերաբար իրականացվում են նշված տարածքի սանիտարական մաքրման, կանաչ տարածքների պահպանման, ծառերի մշակման և խոտհունձի աշխատանքներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ